Սիրո բերկրանքը՝ մարդկային ընտանիքում. ոգեշնչվելով Ն. Ս. Ֆրանցիսկոս Պապի «Սիրո բերկրանքը» առաքելական նամակից

Սիրելինե՛ր, ուզում եմ ձեզ ներկայացնել մի շատ կարևոր թեմա՝ «Սիրո բերկրանքը ընտանիքում»՝ ոգեշնչված Ն. Ս. Ֆրանցիսկոս Պապի «Սիրո բերկրանքը» առաքելական նամակից, որը հրապարկվեց 2016թ. մարտի 19-ին՝ Սբ. Հովսեփի տոնին: Այս նամակը մի յուրօրինակ ամփոփ է Տիրոջ Սուրբ Կաթողիկէ Եկեղեցու ուսմունքի՝ մարդկային ընտանիքի մասին: Սա առաջին նամակը չէ, որ գրվել է ընտանիքի մասին, բայց մի նորագույն պտուղ է, որ հասունացել է ժամանակի մարտահրավերներին համարժեք արձագանքելու պահանջից, որպեսզի Եկեղեցին կարողանա օգնել այսօրվա քրիստոնյա ընտանիքներին՝ իրենց ընտանեկան կյանքը վարել և առաջնորդել քրիստոնեական հունի մեջ՝ հավատարիմ Ավետարանի ոգուն և Սուրբ Ընտանիքի օրինակին:

Եկե՛ք նախ համառոտ կերպով մի անդրադարձ կատարենք, թե ինչ է ընտանիքը՝ քրիստոնեական ընկալմամբ, որպեսզի կարողանանք խոսել սիրո մասին, որ ընտանիքի հիմքն է: Ընտանիքը Եկեղեցու համար հիմնարար արժեք է, քանի Եկեղեցին կազմված է մարդկային ընտանիքներից, Եկեղեցին իր պատմությունը սկսել է մարդկային ընտանիքներից և փրկության դուռը մարդկության համար բացվել է ընտանիքի մեջ՝ Սուրբ Ընտանիքի մեջ. «*Մարդկային ընտանիքը ճանապարհ է, որով անցնում է Եկեղեցին*[1]», ըստ Սբ. Հովհաննես Պողոս Բ Պապի խոսքի: Ըստ Աստծո ծրագրի, ընտանիքը «*կյանքի և սիրո օրրան է*»[2]: «Ընտանիքը, որը ծնվում է խոր միասնությունից և ամուսնական սիրուց՝ այն միությունից, որը հիմնված է տղամարդու և կնոջ ամուսնության վրա, ի սկզբանե ունի յուրահատուկ սոցիալական չափում՝ որպես միջանձնային հարաբերությունների սկզբնական տարածություն, հասարակության առաջին և կենսականորեն կարևոր բջիջը, այն աստվածային կարգադրություն է, որը դնում է հիմքը անհատների կյանքի համար՝ որպես ամեն տեսակի հասարակական կյանքի նախատիպ»[3]:

Ընտանիքը հիմնված է նախնառաջ զույգերի՝ տղամարդու և կնոջ միության վրա, որը հաստատվում է Պսակի սուրբ խորհրդի միջոցով, այսինքն նրանց փոխադարձ համաձայնության և խոստման հիման վրա, որ ազատ կամքով տալիս են Աստծո առաջ, նրանք ընդունում են աստվածային շնորհը՝ գերբնական այն զորությունը, որը նրանց օգնում է կատարելագործել իրենց սերը և կառուցել իրենց ընտանեկան կյանքը՝ Աստծո ծրագրի և պատվիրանների համաձայն:

Էական է, որ ամուսինների փոխադարձ համաձայնությունը և խոստումը հիմնված լինի ***փոխադարձ սիրո*** վրա, որովհետև այդ սիրո միջոցով է իրականություն դառնում միությունը զույգերի միջև. առանց սիրո խոսել զույգերի ամուսնական միության մասին՝ անիմաստ է և հակաքրիստոնեական: Սա մի ճշմարտություն է, որը հիմնված է ամուսնության խորհրդի և մարդկային ընտանիքի հիմնարար ընկալման վրա, որ մարդկային ընտանիքը կոչված է արտացոլելու նախ Աստծո մեջ գոյություն ունեցող միությունը՝ հիմնված կատարյալ աստվածային սիրո վրա, որ հավիտենապես գոյություն ունի Սուրբ Երրորդության Անձերի միջև՝ որպես Սուրբ Հոգի, և ապա փրկության պատմության մեջ արտահայտված Տեր Հիսուս Քրիստոսի և Իր հիմնված

[1] Gratissimam sane, 2
[2] Christifideles laici, 40
[3] Ամփոփ Կաթողիկէ Եկեղեցու սոցիալական ուսմունքի, 211

Սուրբ և Միակ Եկեղեցու միջև գոյություն ունեցող անբաժանելի, անպարտելի սիրո վրա: Թե ինչպիսին է այդ սերը, մենք հստակ պատկերացում կարող ենք կազմել՝ նայելով Հիսուսին, ինչպես մեզ մատնացույց է անում նաև Ն. Ս. Ֆրանցիսկոս Պապն իր «Սիրո բերկրանքը» նամակում:

Քրիստոսի սերն ինքնազոհաբերվող, ամբողջությամբ ինքնանվիրվող սեր է, որը մարդկային ընտանիքի համար մնում է որպես կատարելության գագաթնակետ: Պողոս առաքյալն Եփեսացիներին ուղղված իր նամակում գրում է.

«Նմանվե՛ք Աստծուն՝ որպես Աստծո որդիներ և շարժվե՛ք սիրով, այնպես ինչպես Քրիստոս սիրեց մեզ և մեզ համար ինքն իրեն ընծա և զոհ մատուցեց Աստծուն՝ որպես անուշահոտություն», Եփ. 5, 1-2,

«Ամուսիննե՛ր, սիրեցե՛ք ձեր կանանց այնպես, ինչպես Քրիստոս սիրեց իր Եկեղեցին և իր անձը մատնեց նրա համար, որպեսզի իր առջև կանգնեցնի Եկեղեցին իր ամբողջական փառքով, առանց որևէ արատի կամ աղտեղության կամ նմանատիպ թերության, այլ որպեսզի սուրբ և անարատ լինի», Եփ. 5, 25-27:

Ուրեմն, սիրել միմյանց ինքնազոհաբերվող, ինքնանվիրվող սիրով, որը ոչ մի սահման չի ճանաչում: Սա նշանակում է ***ինքդ քեզ դարձնել մի պարգև, մի նվեր, մի ընծա, մի պատարագ՝ դիմացինի համար***. սա վերաբերում է նախևառաջ ամուսինների միջև հարաբերություններին և նաև ծնող-զավակներ հարաբերություններին: Պատարագվել միմյանց համար, պատասխանատվություն կրել միմյանց երջանկության, զարգացման, լիարժեք և ազատ, առողջ կյանքի համար՝ ամբողջ տարողությամբ և բոլոր կողմերով:

Ինչպիսի՞ն է այս **սերը կենցաղում, մարդկային կոնկրետ հարաբերություններում**: Ֆրանցիսկոս Պապն առաջարկում է առաջնորդվել Պողոս առաքյալի՝ Կորնթացիներին ուղղված առաջին նամակի 13-րդ գլխի տողերով, որոնք մեկնաբանում է առանձին-առանձին: Եկե՛ք մենք էլ խորհրդածենք դրանց շուրջ.

«*Եթե լիարժեք հավատ ունենամ մինչև իսկ լեռներ տեղափոխելու չափ, բայց սեր չունենամ, ոչինչ չարժեմ: Եթե ամբողջ ունեցվածքս բաշխեմ աղքատներին և մարմինս կրակի մատնեմ, բայց սեր չունենամ, ոչնչից չեմ օգտվի: Սերը համբերող է, քաղցրաբարո, սերը չի նախանձում, չի մեծամտանում, չի գոռոզանում, անամոթ արարք չի գործում, իրենը չի փնտրում, բարկությամբ չի գրգռվում, չար բան չի խորհում, անիրավության վրա չի ուրախանում, այլ ուրախակից է լինում ճշմարտությանը, ամեն բանի տոկում է, միշտ հավատում է, միշտ հույս է ընծայում, միշտ համբերում է: Սերը երբեք չի անհետանում…», Ա Կորնթ. 13, 2-8:*

Սերը համբերող է

Ընտանիքում մարդկային հարաբերությունների մեջ լարվածությունները պետք է հաղթահարել համբերատարությամբ: Բայց սա չի նշանակում ստիպված տանել ամեն անարդարություն կամ վիրավորանք: Պետք է միշտ հիշենք, որ մարդիկ կատարյալ չեն և ինքներս էլ սխալական ենք, չպետք է ինքներս մեզ դնենք կենտրոնում և ակնկալենք, որ ամեն բան պետք է լինի ըստ մեր պատկերացումների: Հակառակ դեպքում սկսում ենք ամեն ինչի արձագանքել բարկությամբ, դառնում ենք դյուրագրգիռ: Քանի դեռ չենք սովորել լինել համբերատար, միշտ պատրվակներ կգտնենք արձագանքելու

բարկացած: «*Ի վերջո չենք կարողանա ապրել միասին և մեր ընտանիքները կդառնան ռազմադաշտ*[4]», գրում է Ն. Ս. Ֆրանցիսկոսը: Նա հիշեցնում է Սբ. Պողոսի խոսքերը.
«*Թող ամեն դառնություն, բարկություն, սրտմտություն, աղաղակ և հայհոյություն վերացվի ձեզանից՝ ամեն չարության հետ*», Եփ. 4, 31:
Պապը շարունակում է.
«*Համբերատարությունն արմատավորվում է, երբ ընդունում եմ, որ այլ մարդիկ նույնպես իրավունք ունեն ապրելու այս աշխարհում՝ այնպիսին, ինչպիսին, որ կան*»[5], նույնիսկ եթե նրանք չեն մտածում և չեն ապրում այնպես, ինչպես ես, այսինքն՝ նա, ումից տարբերվում են նրանք:
Համբերատարությունը նաև մեզ նմանեցնում է մեր Արարչին, ով «դանդաղ է բարկանալու մեջ», Ելք. 34, 6, բազմագութ և բազումողորմ է, համբերատար է բոլորիս մեղքերի և սխալների հանդեպ, որովհետև Աստված չի կամենում պատժել կամ հատուցել անմիջապես, այլ միշտ ժամանակ է տալիս դարձի գալու համար. «*Աստված չի կամենում, որ որևէ մեկը կորստյան մատնվի, այլ ուզում է, որ ամենքն էլ ապաշխարեն*», Բ Պետ. 3, 9:

Սերը քաղցրաբարո է

Միայն համբերատարությունը քիչ է, քրիստոնյան չպետք է միայն անգործությամբ հանդուրժի ուրիշներին, այլև պետք է շատ գործուն ձևով քաղցր վարմունք ցուցաբերի: Մենք խոսում ենք ոչ թե պարզ և զսպված սառն հանդուրժողականության մասին, այլ՝ համբերող այն սիրո մասին, որն արտահայտվում է գործերով, բարեհամբույր և մեղմ վարմունքով, խոսքերով: Եբրայերեն «սիրել» բառը նշանակում է բարիք գործել, գրում է Պապը և հրավիրում հենց այդպես հասկանալ սերը: Սերն, ուրեմն, ձգտում է օգնել ուրիշներին՝ դուրս գալ ընկճվածությունից, հուսահատությունից, ջանում է ստեղծել պայմաններ, որպեսզի լիցքաթափվի դիմացինի լարվածությունը, հարթվեն սուր անկյունները, ջանում է լուծում գտնել դիմացինին տանջող խնդիրներին և չի պահանջում միայն այն, ինչ այդ պահին իրեն է հաճելի:

Սերը չի նախանձում

Նախանձը քայքայում է սերը, որովհետև մարդուն պարփակում է ինքն իր մեջ, մինչդեռ «*Ճշմարիտ սերը գնահատում է ուրիշի ձեռքբերումները*»[6] և չի տխրում, երբ դիմացինը հասնում է երջանկության: Ճշմարիտ սերը մարդուն սովորեցնում է, որ յուրաքանչյուրը կյանքում իր ուրույն ճանապարհն ունի՝ հասնելու երջանկության և ջանում է «բացահայտել երջանկության ի՛ր ճանապարհը»՝ թույլ տալով, որ ուրիշներն էլ գնան իրե՛նց ճանապարհով: Սա նշանակում է՝ վեր բարձրանալ ինքնակենտրոնացումից, գնահատել նաև ուրիշներին՝ որպես Աստծո ստեղծագործության գլուխգործոցներ՝ հիշելով Պողոս առաքյալի խոսքերը, որ գրում է «*թող յուրաքանչյուրը մյուսներին խոնարհությամբ ավելի լավը համարի, քան ինքն իրեն*», Փլպ. 2, 3:
Ընտանիքում, եթե ամուսինները նախանձեն միմյանց հաջողությունների, կամ զավակների կողմից ավելի շատ սիրված լինելու համար, նրանց սերը դատապարտված

[4] «Սիրո բերկրանքը», 92
[5] Նույն տեղում
[6] Նույն տեղում, 95

է պարտության, որովհետև եսասիրությունը կկործանի զույգերի «մենք»-ը և ապա՝ ամբողջ ընտանիքի «մենք»-ը: Եթե զավակները սկսեցին նախանձել միմյանց՝ սիրո առավել կամ պակաս չափով ստանալու համար, նրանց սոցիալականացումը կսկսի ընթանալ սխալ ուղղությամբ՝ արդեն իսկ ընտանիքում, որից կտուժի ոչ միայն ընտանիքը, այլև՝ հասարակական այն խմբերը, որոնցում հետագայում կջանա ինտեգրվել այն զավակը, որ մեծացել է՝ նախանձի զգացումը սրտում: Նախանձի հաղթահարման միակ ճանապարհը անձնվեր սիրո օրինակն է, երբ ընտանիքում յուրաքանչյուր անձ պատրաստ է ինքն իրեն դարձնել նվեր՝ դիմացինների համար:

Սերը չի պարծենում

Իրական սերը, որն Աստծուց է, որը քրիստոնյան կոչված է ապրելու, չի կարող պարծենալ, այսինքն՝ հպարտանալ, լինել ամբարտավան, մտածել, որ ես ավելի լավն եմ, ավելի կարևոր եմ, ավելի խելացի եմ, ավելի շատ եմ գումար վաստակում, ավելի լավ տնտեսվար եմ, քան՝ մյուսները: Այս զգացումները տանում են դեպի փառասիրություն, իշխելու, դիմացինին շահագործելու, արհամարհելու ցանկություն, որը կործանում է սերը: Մինչդեռ, «*իրականում մեզ կարևոր է դարձնում սերը, որը հասկանում է, մտահոգվում է և ընդունում տկարներին*»[7]: Հիսուս բացառում է իշխելու ցանկությունը և ասում է «ով ուզում է ձեր մեջ լինել առաջինը, ձեր ծառան պիտի լինի», Մտթ. 20, 27 և ավելացնում է, որովհետև Մարդու Որդին չեկավ ծառայություն ընդունելու, այլ՝ ծառայելու: Ընտանեկան սերն, ուրեմն, կառուցվում է փոխադարձ ծառայության պատրաստակամությամբ: Պողոսը գրում է. «Քավ լիցի ինձ պարծենալ այլ բանով, քան՝ միայն Քրիստոսի Խաչով», Գղտ. 6, 14, իսկ խաչը ծառայության և նվիրումի կատարելությունն է:

Սերը կոպիտ չէ

Սերը չի կարող լինել կոպիտ կամ դաժան, այլ պահանջում է նրբազգացություն և զսպվածություն, որոնք նորոգում են վստահությունն ու փոխադարձ հարգանքը, գրում է Քահանայապետը՝ շարունակելով մեկնել Կորնթացիներին ուղղված նամակի 13-րդ գլխի տողերը: Երբ, մանավանդ, ամեն օր «մտնում ես ուրիշի կյանք», այսինքն ընտանեկան կենցաղում անձերի կյանքերը միմյանց միացած են, «իրար մեջ մտած», նրբազգացությունն ու համբերատար, զուսպ, «բարի հայացքը» անհրաժեշտություն են, որպեսզի կարողանանք միշտ տեսնել ու շեշտել ոչ թե միմյանց թերությունները, սխալները, այլ՝ դրական կողմերը, ձեռքբերումները, հնարավորությունները, երազանքները, հարգենք դիմացինի ազատությունը և կարողանանք սփոփել, զորակցել, քաջալերել, ինչպես Տերն Ինքն էր անում և շարունակում է անել այսօր էլ: Հիշե՛նք Տիրոջ խոսքերը. «Քաջալերվիր, դուստր, քո հավատը քեզ փրկեց», Մտթ. 9, 22, «Մեծ է քո հավատը», Մտթ. 15, 28, «Մի վախենա, այլ միայն հավատա», Մրկ. 5, 36, «Աղջիկ, քեզ եմ ասում, վեր կաց», Մրկ. 5, 41, «Մի վախեցեք», Մտթ. 14, 27 և այլն: Պապը մեզ հրավիրում է մեր ընտանիքներում միմյանց հետ խոսել ոգևորող, քաջալերող խոսքերով, ոչ թե նսեմացնող, վիրավորող, ընկճող խոսքերով: Այսպիսի խոսքերի կարիքը ունեն ոչ միայն երեխաները, որոնց մենք կարող ենք ուղեկցել դեպի

[7] Նույն տեղում, 97

բարձունքներ,, հատկապես մեր սիրառատ քաջալերանքներով, այլև՝ ամուսինները, նաև ծերերը, որոնք հաճախ արհամարհված են:

Սերն առատաձեռն է

Ճշմարիտ սերը չի կարող լինել կցկտուր, ժլատ և նախապայմաններով, այլապես դա սեր չէ: Տերն ասում է. «Չկա ավելի մեծ սեր, քան այն, երբ մեկը կյանքն է տալիս իր ընկերոջ համար», և ինչպես Ինքը Իր կյանքը տվեց իր հոգևոր ընտանիքի՝ Եկեղեցու յուրաքանչյուր եղբոր և քրոջ համար, ավելին՝ նաև իր թշնամիների համար: Ընտանիքում, ուրեմն պետք է առաջնորդվել Տիրոջ օրինակով, որ այսօր էլ շարունակում է զոհաբերվել մեզ համար՝ Իր Պատարագի միջոցով, որտեղ բոլորս հաղորդվում ենք իր առատ Զոհին և Իր նման նվիրվում ենք Աստծուն և միմյանց՝ առատորեն, առանց սահմանափակումների, առանց չափի: Տերն Ինքը սիրում է առանց չափի, «Հոգին տալիս է առանց չափի», «սիրեց յուրայիններին ի սպառ»՝ ասելով. «Ես եկա, որպեսզի կյանք ունենան, և առատորեն ունենան», Հվի. 10, 10: Այսպես ընտանիքում յուրաքանչյուրը, և, մանավանդ, ծնողները պետք է իրենք իրենց նվիրեն ամբողջությամբ, որպեսզի կյանքն առատ լինի, սերն առատ լինի, հավատը և հույսը, դրական սպասումներն առատ լինեն, ի վերջո, սեղանին հացն առատ լինի, յուրաքանչյուրը լինի ուշադրության կենտրոնում, յուրաքանչյուրը լինի լսված և կարևոր: Սա նաև նշանակում է առատաձեռն և բաց լինել նոր զավակների ծննդյան առջև, որովհետև ով առատորեն է բացվում Աստծո առաջ, Աստված առատորեն էլ օրհնում է իր շնորհներով ու պարգևներով:

Սերն իրենը չի փնտրում

Ճշմարիտ սերը չի կարող շահախնդիր լինել և փնտրել միայն սեփական շահը: Որովհետև քրիստոնյայի համար սիրել՝ նշանակում է ինքնահրաժարում, ինքնահաղթահարում, դուրս գալ սեփական ես-ի սահմաններից, փլեցնել ես-ի շուրջ կառուցած գոռոզության և ապահովության պարիսպները, գնալ ընդառաջ ուրիշներին, բացվել ուրիշների առաջ, վերցնել տառապանքի, դժվարությունների սեփական բաժին խաչը, նաև՝ ուրիշների խաչերը, և գնալ Հիսուսի ետևից, Նրա նման և Նրա օգնությամբ բարձրանալ Գողգոթա, խաչը ելնել՝ հանուն դիմացինի երջանկության, նույնիսկ երբ դիմացինը դա չի հասկանում և գուցե երբեք էլ չհասկանա, շարունակել սիրել, երբ այդ սերը գնահատված չէ և, գուցե, չգնահատվի, ի վերջո, տառապած հոգով բայց մաքուր ու խաղաղ խղճով ուրախանալ և ցնծալ, երջանկանալ, երբ տեսնում ենք դիմացինին՝ ամուսնուն, կնոջը, զավակներին հասած բարձունքների, մանավանդ, բարոյական և հոգևոր կյանքում, ստեղծագործական ինքնարտահայտման մեջ, բարիք ստեղծելիս, ճիշտ ինչպես Հիսուսն է ուրախանում, երբ մեզ ուղեկցում է դեպի «դալար մարգագետիններն ու գետաբերանները» Սղմ. 22, ըստ սաղմոսերգուի աղոթքի:

Սերը չի զայրանում և ոխակալ չէ

Երբ ընտանիքում մեզ համար սերը և խաղաղությունը հռչակված են որպես ամենակարևոր սկզբունքներ, երբ բարկանում ենք որոշ սխալների համար, չպետք է տեղի տանք, որ չարը մեզ հաղթի և մղի դեպի մեղքը, քայքայի ընտանեկան

համերաշխությունը: Ինչ-որ մեկը պետք է բարկությունը հաղթահարելու, խաղաղությունը վերականգնելու առաջին քայլը անի: Եվ այդ մեկը ե՛ս եմ, դու՛ ես, յուրաքանչյուրս պետք է պատրաստ լինի առանց երկորդական նախապայմանների անելու առաջին քայլը, ինչպես Տերն Ինքը արեց՝ Ինքն իրեն մատնելով մահվան, մինչ մենք իրեն թշնամի էինք, ըստ Պողոսի խոսքերի: Գուցե, առաջին քայլը նման է խաչի, բայց պտուղը խաղաղությունն ու սերն է, որոնք գերագույն արժեքներ են: Ինչպե՞ս անել առաջին քայլը: Ֆրանցիսկոսը գրում է. «*Ծնկի գալո՞վ: Ո՛չ: Մի փոքր ժեստ, մի փոքր բան, և ներդաշնակությունը ձեր ընտանիքում կվերականգնվի: Մի քիչ քնքշանք, խոսքեր հարկավոր չեն: Բայց մի՛ թողեք, որ օրն ավարտվի՝ առանց ընտանիքում խաղաղություն հաստատվելու*», և հիշեցնում է դարձյալ Պողոսի տողերը. «*Թող արեգակը ձեր բարկության վրա մայր չմտնի*», Եփ. 4, 26:

Սերը ներում է

Սրբազան Քահանայապետը բացատրում է, որ Պողոսի նամակում հունարեն բնագրի արտահայտությունը ներման մասին թարգմանվում է հետևյալ կերպ. «սերը հաշվի չի առնում չարը», այսինքն՝ այն չի բարկանում: Սա նշանակում է, որ ներել՝ նշանակում է մի կողմ դնել կամ անկարևոր համարել դիմացինի կողմից նախկինում գործված սխալները, չարիքը, վիրավորանքը և առավել կարևորել այն դրականը, որ կա դիմացինի մեջ և դրա վրա կառուցել նոր հարաբերություններ, որոնցում տեղ չկա վրեժխնդրության համար: Պողոս առաքյալը գրում է. «*Հետևում մնացածները մոռացած՝ ձգտում եմ դեպի իմ առջևում եղածները. ուշադիր կերպով վազում եմ դեպի իմ նպատակակետը, որին Աստված մեզ կոչել է Քրիստոս Հիսուսով*», Փիլ. 3, 13-14:
Ներելը շատ բարդ է, ոչ ոք սա չի ժխտում, բայց որպեսզի կարողանանք ներել, հարկավոր է ճիշտ տեղերում դնել շեշտերը, այսինքն՝ չենք կարող ամեն բանի մոտենալ հավասար լրջությամբ, կան արժեքներ, իրողություններ՝ օրինակ ընտանիքի միասնականությունը, խաղաղությունը, բոլորի բարձր տրամադրությունը, ուրախությունը, որոնք չեն կարող համեմատվել կենցաղային սխալների հետ, նույնիսկ ավելի ծանր սխալները՝ դավաճանություն, վիրավորանք, եթե կա զղջում, չեն կարող լինել ավելի ծանրակշիռ քան այդ արժեքները: Եվ որպեսզի պահենք ու փայփայենք դրանք, հարկավոր է կատարել *զոհողություններ*: Սա քրիստոնեական կյանքի հիմնաքարն է:

Սերն ուրախանում է ուրիշների հետ միասին

Ընտանիքում ճշմարիտ և անշահախնդիր սերն ուրախանում է դիմացինի ուրախությամբ և ոչ թե նախանձում կամ անտարբեր սառնությամբ մտածում միայն իր հաջողությունների մասին: Յուրաքանչյուրի հաջողությունը կրթության մեջ, աշխատանքում, մարդկային հարաբերություններում պետք է լինի *տոնելի* ընտանիքի բոլոր անդամների համար, որովհետև դա խրախուսանքի, քաջալերանքի, աջակցության, զորակցության կարևոր մի քայլ է: Եվ սա առավել կարևոր է հոգևոր դաշտում, երբ օրինակ ամուսինը խրախուսում է կնոջ աղոթական կյանքը, Պատարագի հաճախելը, Աստվածաշունչ ընթերցելը և ոչ թե քննադատում նրան, երբ ծնողն ուրախանում է՝ տեսնելով, որ զավակն ընդունում է իր առաջին

խոստովանության և Սբ. Հաղորդության խորհուրդները, երբ ասում է իր առաջին աղոթքները:

Սերն ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում է, ամեն բանի հույս ունի և ամեն ինչի համբերում է

Այս չորս արտահայտություններով է Սբ. Պողոսը նկարագրում սիրո զորությունը.
սեր, որ *ամեն բանի* կարող է տոկալ, դիմանալ՝ նախևառաջ միմյանց սխալներին, թուլություններին՝ դրանք դիտելով անձի ամբողջական կերպարի մեջ և իր ուշադրությունը պահելով անձի ընդհանուր նկարագրին, դրական լույսին, որ կա յուրաքանչյուրի մեջ, որը օգնում է տոկալ՝ սիրելով:
Ամեն բանի հավատալը Քահանայապետն առաջարկում է հասկանալ դիմացինին *վստահելու* իմաստով, որն օգնում է մարդկային հարաբերությունները դարձնել առավել ազատ, անկաշկանդ, վստահելի, ոչ վերահսկվող: Երբ, օրինակ, ամուսիններից մեկը մշտապես կասկածանքով, քննադատությամբ և կշտամաբանքով է վերաբերվում կնոջը կամ զավակներին, սա կարող է հանգեցնել գաղտնապահության, ստի, անինքնավստահության, որոնք կարող են ծանր հետևանքներ ունենալ թե անհատի և թե ընտանեկան հարաբերությունների համար:
Ամեն բանի հուսալ. ամեն բանի հուսալը ընտանիքում շատ էական է.ամուսինը կամ կինը միշտ հուսով են, որ դիմացինը կարող է փոխվել Աստծո զորությամբ, որ թերությունները կարո՛ղ են շտկվել Աստծո միջամտությամբ, հիվանդությունները կարո՛ղ են բուժվել Տիրոջ օգնությամբ, սոցիալական խնդիրները կարո՛ղ են հարթվել Աստծո օրհնությամբ. ի վերջո, Հիսուս մեզ քաջալերում է՝ ասելով. «Թակի՛ր, և կբացվի քո առաջ»:
Ամեն բանի համբերել. Աստծո գերբնականն շնորհով զորացած սերը կարող է հաղթանակած դուրս գալ ամեն դժվարությունից, «դա սեր է, որը երբեք չի հանձնվում, նույնիսկ՝ ամենամութ ժամին[8]», գրում է Քահանայապետը: Սիրել միմյանց, սիրել ընտանիքը՝ չնայած անցած բարդ ճանապարհին, միմյանց հանդեպ անհասկացողության, նույնիսկ ատելության ժամանակավոր պահերին, ճգնաժամերին՝ հասկանալով, որ միայն սերն է մնայունը և արժանին, որի համար պետք է համբերել և պայքարել, Գողգոթա բարձրանալ, խաչվել, պատարագվել, երբ անհրաժեշտ է, որովհետև ի վերջո, վարձատրությունը պահպանված, հարստացած, ամրացած և կյանքով, բերկրանքով լի ընտանիքն է՝ Աստծո պարգևը և այն դափնին, որ սպասում է մեզ երկնքում՝ այն բանի համար, որ կարողացանք «հաղթել աշխարհին», ինչպես Հիսուս հաղթեց: Չէ՞ որ գիտենք թե Ու՛մ ենք հավատացել, ո՛վ է մեր ուսուցիչը, ինչպես գրում է Պողոսը:

Միասնաբար՝ ընտանիքում և ընտանիքի միջոցով մենք սովորում ենք կերտել մի հաստատուն արժեք՝ **սերը, որը «երբեք չի անհետանում»**, այսպես է ավարտվում Պողոսի սիրո օրհներգը: Եթե մեր ընտանիքներում մենք չկարողանանք պահել և աճեցնել սերը, այն երբեք չի աճի նաև Եկեղեցում, որ ընտանիքների Ընտանիք է՝ կամ հարստանում է և առաջ է գնում ընտանիքներում գոյություն ունեցող և ընտանիքներից եկող սիրով՝ միշտ սնվելով և ազնվանալով Քրիստոսի սիրուց, որ միաժամանակ

[8] Նույն տեղում, 118

տարածվում և լցվում է նաև մեր ընտանիքների մեջ, իր հետ միասին մեզ բարձրացնում դեպի Երկինք, դեպի Աստվածայինը, որպեսզի «մարդն աստվածանա», ըստ Աթանաս Ալեքսանդրացու խոսքերի:

Սիրո բերկրանքը կարելի է իսկապես վայելել, երբ հետևում են մնացել բազում դժվարություններ, որոնք կարողացել ենք հաղթահարել միասին և Աստծո օգնությամբ: «Որքան մեծ է վտանգը ճակատամարտում, այնքան մեծ կլինի հաղթանակի բերկրանքը», գրում է Սբ. Օգոստինոսը:

«*Միասին տառապելուց և պայքարելուց հետո ամուսինները կարող են փորձառություն ունենալ, որ դա արժանի է իրենց ջանքերին, որովհետև որոշակի բարիք են ձեռք բերել, ինչ-որ բան են սովորել՝ իբրև զույգ կամ սկսել են գնահատել այն, ինչ ունեն: Մարդկային քիչ ուրախություններ են այնքան հուզիչ և խոր, որքան նրանք, որ ունեն իրար սիրող և մեծ ու համատեղ ջանքերի արդյունքում ինչ-որ բան ձեռք բերած մարդիկ*»[9], գրում է Քահանայապետն իր նամակում:

Քահանայապետը մի քանի այլ գործնական խորհուրդներ ևս տալիս է, որոնց շուրջ արժե մտածել: Որպեսզի սերն ընտանիքում ինքն իրեն անընդհատ վերաբացահայտի և աճի.

-ընտանիքում երեք խոսք պետք է հաճախակի օգտագործել՝ «Շնորհակալություն», «Խնդրում եմ», «Ներողություն»,

-անօգուտ է ընտանիքում երազել կատարյալ, անթերի սիրո մասին, որն աճելու կարիք չունի, միշտ հիշեք, որ լավագույնը դեռ նոր է գալու, լավ գինին տարիների ընթացքում է հասունանում,

-ավելի օգտակար է «իրատես լինել մեր սահմանափակումների, թերությունների, անկատարությունների առումով և ընդառաջ գնալ միասին աճելու, սերը հասունացնելու, միությունը զորացնելու կոչին, ինչ էլ որ լինի»,

-շատ կարևոր է երբեք չկորցնել ընտանիքում միմյանց հետ զրուցելու կարողությունը, որակյալ ժամանակ հատկացրեք միմյանց, պատրաստ եղեք միշտ համբերատարությամբ լսելու միմյանց, հաճախ խորհուրդ տալուց առաջ կամ վճիռ լսելու փոխարեն դիմացինը կարիք ունի պարզապես լսելի լինելու և հասկացվելու, այնպես լսեք, որ դիմացինը զգա ձեր ուշադրությունը,

-երբեք մի՛ ստորադասեք, թերագնահատեք միմյանց, կարողացե՛ք իրապես հասկանալ դիմացինի խնդիրների պատճառը, մտահոգությունները, մտածեք դիմացինի նման և մի խուսափեք ուրիշի դրության մեջ ինքներդ ձեզ պատկերացնելուց,

-բաց պահեք ձեր միտքը և աշխարհայացքը՝ միշտ այն ընդլայնելու պատրաստակամությամբ՝ նաև դիմացինի օգնությամբ,

-ամենայն զգուշությամբ ընտրեք ձեր բառերը՝ նույնիսկ երբ խոսում եք ամուսնու, կնոջ կամ երեխաների հետ, որպեսզ չվիրավորեք դիմացինին,

-հիշեցե՛ք, որ առավել հաճախ վեճերի պատճառը ոչ թե խոսքի բովանդակությունն է, այլ՝ ասելու ձևը և տոնը,

-հարուստ և կարևոր բովանդակությամբ զրույցներ ունեցեք միմյանց հետ, շատ կարդացեք, աղոթեցեք և մտածեք լուրջ, կառուցողական թեմաների շուրջ:

«Ընտանիքը, որ միասին աղոթում է, կմնա միասին», Մայր Թերեզա:

[9] Նույն տեղում, 131

Աղոթք՝ Սուրբ Ընտանիքին

Յիսու՛ս, Մարիա՛մ եւ Յովսէ՛փ,
Ձեր մէջ ենք տեսնում ճշմարիտ սիրոյ գեղեցկութիւնը,
Ձե՛զ ենք դիմում վստահութեամբ:
Նազարեթի Սուրբ Ընտանի՛ք,
Շնորհէ՛ք, որպէսզի մեր ընտանիքները եւս լինեն
Հաղորդութեան եւ աղօթքի վայրեր,
Աւետարանի իսկական դպրոցներ
Եւ փոքրիկ տնային եկեղեցիներ:
Նազարեթի Սուրբ Ընտանի՛ք,
Թո՛ղ որ ընտանիքներն այլեւս երբեք
Չտեսնեն բռնութիւն, մերժում եւ բաժանում,
Թո՛ղ որ բոլոր նրանք, ովքեր վիրաւորուած են կամ վարկաբեկուած,
Մխիթարութիւն եւ բուժում գտնեն:
Նազարեթի Սուրբ Ընտանի՛ք,
Մեզ դարձեալ յիշեցրէ՛ք
Ընտանիքի սրբութիւնը եւ անձեռնմխելիութիւնը
Եւ ընտանիքի գեղեցկութիւնը Աստծոյ ծրագրում:
Յիսու՛ս, Մարիա՛մ եւ Յովսէ՛փ,
Շնորհ արէ՛ք եւ լսեցէ՛ք մեր աղօթքը. Ամեն

Տ. Հովսեփ Գալստյան
Ընտանիքների հանդիպման համար, Գյումրի, 18.12.2021